

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ  
ՀՐԱՄԱՆ

«08» հունվար 2020 թ.

No 08 – Ա

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ  
«ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ» ԲԱԺՆԻ «ՁԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻՆ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ  
ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻՆ ԵՎ ՆՐԱՆՑ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ  
ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ», «ՄԱՆԿԱԲԱՐՁԱԿԱՆ  
ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ» ԵՎ «ՍՐՏԻ ԱՆՀԵՏԱԶԳԵԼԻ  
ՎԻՐԱՀԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ» ԾՐԱԳՐՈՒՄ/ԾՐԱԳՐԵՐՈՒՄ ԸՆԳՐԿՎԱԾ  
ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ»  
ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՕՖԵՐՏԱՅՈՎ ԿՆՔՎՈՂ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎԸ  
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 728-Լ որոշման հավելվածով հաստատված Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրության 18-րդ կետի 20-րդ ենթակետը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մարտի 4-ի N 318-Ն որոշումը

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ ԵՄ

1. Հաստատել «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի «Առողջապահություն» բաժնի «Ձինծառայողներին, ինչպես նաև փրկարարական ծառայողներին և նրանց ընտանիքների անդամներին բժշկական օգնության ծառայություններ», «Մանկաբարձական բժշկական օգնության ծառայություններ» և «Սրտի անհետաձգելի վիրահատություններ» ծրագրում/ծրագրերում ընգրկված շահառուներին ծառայություններ մատուցելու վերաբերյալ» հրապարակային օֆերտայով կնքվող պայմանագրի օրինակելի ձևը՝ համաձայն հավելվածի,

2. Առողջապահության նախարարության գլխավոր քարտուղարի պարտականությունների կատարող Լուսինե Քոչարյանին՝

կազմակերպել սույն հրամանով հաստատված պայմանագրի օրինակելի ձևով հրապարակային օֆերտայի տեղադրումը առողջապահության նախարարության <http://www.moh.am/> կայքում:

3. Առողջապահության նախարարության պետական առողջապահական գործակալության պետ Ծաղիկ Վարդանյանին՝

հիմք ընդունել սույն հրամանի 1-ին կետով հաստատված պայմանագրի դրույթները:

4. Սույն հրամանով հաստատված պայմանագրի դրույթները տարածվում են 2019 թվականի դեկտեմբերի 15-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

5. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել առողջապահության նախարարի տեղակալ Արտյոմ Սմբատյանին:

ԱՐՄԵՆ ԹՈՐՈՍՅԱՆ